

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՊԶՏԻԿ ԳՈՐԾԵՐԸ՝ ՄԵԾ ՍԻՐՈՎ ԸՆԵԼ
Աստուծոյ նկատմամբ հաւատք ու սեր ունեցող մարդիկս ընդհանրապէս կ'ակնկալենք, որ Աստուած մեծամեծ ու հրաշալի գործեր պիտի կատարէ մեր միջոցաւ՝ մեր միջավայրին մէջ: Երբեմն ալ կը կարծենք, որ Աստուած կը սպասէ մեզմէ, որ մենք եւս մեծ գործեր կատարենք: Եւ սակայն, Աստուծոյ համար, մեծ գործեր ընել չի նշանակեր երեւելի գործեր ընել, այլ՝ կը նշանակէ պզտիկ ու աննշան մեր առօրեայ գործերը մեծ սիրով ու հաւատքով ընել: Աստուծոյ համար աւելի մեծ հերոս մարդ է իր պաշտօնը բժախնդրութեամբ ու սիրով կատարող աւելածուն, քան՝ նախագահական աթոռին վրայ բազմած անտարբեր ու անպատասխանատու նախագահը:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր, ողորմէ՛ բազմամեղիս, ապաշխարութեան դարձի՛ բեր վտարանդի գերիս եւ մտցո՛ւր արժուանական փառքին մէջ: Առաջնորդէ՛ Քու մօտդ գալու վերնային մանապարհով, որովհետեւ եթէ դուն չառաջնորդես, ես չեմ կրնար գալ, որովհետեւ դո՛ւն իսկ ըսիր . «Ոչ ոք կրնայ մօտս գալ, եթէ Հայրս չճաշէ զայն»:

Եւ արդ, Տէ՛ր իմ գթած, մի յիշեր իմ բազում պիղծ մեղքերս եւ մի՛ անտեսեր Քու ծառայ: Մի՛ ձգեր զիս, որ մնամ նոյն չարիքին մէջ եւ դեգերիմ աշխարհիկ կեանքի մէջ, այլ ինչպէս փախած ծառայի ետեւէն ընթանալով՝ այնպէս զիս ե՛տ բեր, քողութիւն տուր յանցանքներուս եւ հաղորդ դարձո՛ւր Քու սուրբ կամարարներուդ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵԱ...

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒԴ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, ԿԱՐԴԱ՝ Սաղմոս 20

Տէ՛րԸ թող լսէ աղօթքներդ, երբ որ անձկութեան մէջ ես: Մեր հայրերուն Աստուածը ի՛նք թող պաշտպան ըլլայ քեզի: Քեզի օգնութիւն թող զրկէ իր սրբարանէն, եւ Սիրոնէն քեզ զօրացնէ: Տէ՛րԸ թող յիշէ քու նուէրներդ եւ զոհերդ ընդունելի համարէ:

Տէ՛րԸ սրտիդ համեմատ թող տայ քեզի, եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:

Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնծանք, եւ Աստուծոյդ յաղթանակին դրօշը պիտի կրենք: Տէ՛րԸ կատարէ՛ բոլոր խնդրանքներդ:

Հիմա գիտցայ, որ Տէ՛րԸ կը փրկէ իր օծեալը, անոր աղօթքին պատասխան կուտայ իր սուրբ երկինքէն եւ իր զօրութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ: Ոմանք իրենց պատերազմի կառքերուն, ուրիշներ ձիերու կ'ապաւինին, բայց մենք Աստուծոյ՝ մեր ՏԻՐՈՋ կ'ապաւինինք: Անոնք պիտի ծունկի գան եւ իյնան, մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլուխնիս բարձր:

Ո՛վ Տէ՛ր, փրկէ՛ թագաւորը, երբ քեզ կանչենք՝ պատասխանէ՛ մեր աղօթքներուն:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԾԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագ քերթ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԶՈՒ ԽՕՍԲԻ ԽՍ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍԴ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿՐԱԿԻ , 26 ՅՈՒՆԻՍ 2020 ԹԻՒ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԸՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Եւ. 3.16-4.1: Ա. Կր. 1.25-30: ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 18: 10-14

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 18.10-14

Ձգոյ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն՝ յետ մէկը: Գիտցէ՛ք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս, որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք, եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննիսունինը ոչխարները լերան վրայ եւ չերթա՞ր փնտռելու կորսուած ոչխարը: Այո՛, կ'երթայ : Եւ եթէ պատահի, որ գտնէ վստահ եղէք, որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննիսունինը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է չ'ուզեր, որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

Այս հատուածին մէջ կը կարդանք երկու բաժիններ.

- 1.- Մեր վերաբերմունքը փոքրիկներուն հանդէպ, ուր Քրիստոս կը թելադրէ եւ կը զգուշացնէ մեզի, որ չարհամարհենք զանոնք: Մեր գուրգուրանքը պէտք է ըլլայ այնպէս, ինչպէս որ Քրիստոս ինք կը գուրգուրար փոքրիկներուն: Յատուկ տեղ պէտք է ունենան անոնք մեր կեանքին մէջ, որովհետեւ անոնք իրենց յատուկ տեղը ունին Աստուծոյ մօտ:
- 2.- Կորսուած ոչխարին օրինակը: Քրիստոս որպէս ճշմարիտ հովիւ փնտռեց իր կորսուած ոչխարը, իր կեանքը զոհեց այդ ոչխարը վերադարձնելու իրեն: Այսօր եւս կան կորսուած ոչխարներ երկրի վրայ Քրիստոս կը փնտռէ այդ կորսուած ոչխարները: Մենք եւս իբրեւ օգնականներ Քրիստոսի, պարտականութիւն ունինք իրեն հետ փնտռելու կորսուածը եւ վերադարձնելու ճշմարիտ բնակարանը՝ Աստուծոյ մօտ:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎԱՄԿԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՆ ԳԻՐՔԵՆ
3.16- -4.1**

Այսպես կ'ըստ Տէրը. «Քանի որ Սիոնի աղջիկները հպարտացան, բարձրավիզ կը քալեն, ցանկալից ակնարկներ կը նետեն, մանրաքայլ կը շարժին եւ ցատկըռտելով կը քալեն, որպէս պատիժ պիտի նուաստացնեն Սիոնի իշխանուհիները եւ զիրենք պիտի մերկացնեն իրենց զարդերէն»:

Այն օրը տէրը պիտի հանէ անոնց փառաւոր զգեստները եւ ոտքերուն մեհեւանդները, մազի հիւսքերը, գլխազարդ ծամակալներն ու պսակակալները եւ վզի մահիկները, ճակատի գինդերը, օղերը, ապարանջաններն ու շղարշէ շալերը, ապառօշները, քօղէքներն ու մետաքսէ զօտիները, անուշահոտերու տուփերը, յուռութները, մատանիներն ու քթամանեակները, դիպակէ պատմուճանները, վերարկուները, թիկնոցները եւ ձեռնապայուսակները, հայելիները, բեհեզէ զգեստները, խոյրերն ու քօղերը:

Իրենց հպարտանքին փոխարէն՝ անուշահոտութեան տեղ զարշահոտութիւն պիտի ունենան, մէջքի կամարներուն տեղ՝ չուանէ զօտի, գեղեցկահիւս մազերու տեղ՝ կնտութիւն, ոսկեհիւս դիպակներու տեղ քուրձ պիտի հագնին եւ գեղեցկութեան տեղ ամօթ պիտի ունենան:

Անոնց սիրելի եւ գեղեցիկ զաւակները սուրով պիտի իյնան, իրենց կտրիճները պատերազմի մէջ պիտի սպաննուին: Չարդերու արկղները անարգութեան ու սուգի տապան պիտի ըլլան եւ անոնք պիտի մնան լքուած, առանձին եւ իրենց քիթերը գետին պիտի քուտին:

Այն օրը եօթը կին մէկ այր մարդ պիտի բռնեն եւ ըսեն. «Մենք մեր հացը կը գտնենք եւ հագուստները կը հոգանք. միայն քու անունդ տուր մեզի, անամուսնութեան նախատիւնը վերցուր մեր վրայէն»:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ



**ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
1.25-30**

Աստուծոյ տնօրինութիւնը, որ յոյներ յիմարութիւն կ'որակեն, իմաստնագոյնն է քան մարդկային որեւէ իմաստութիւն եւ Աստուծոյ խաչը, որ հրեաներ տկարութիւն կը համարեն, աւելի գօրեղ է, քան՝ մարդկային ամէն գօրութիւն:

Եղբայրներ, դուք ձեզմէ դատեցէ՛ք. ինչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հօգօր կամ ազնուատու էին մարդկային չափանիշներով: Բայց Աստուած դիտմամբ ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը յիմար եւ անիմաստ կը գտնէ, անով իմաստունները ամօթով ձգելու համար: Ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը տկար կը համարէ, անով հօգօրները ամէնցնելու համար եւ ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը նկատէ, անով ոչնչացնելու համար այս աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՛ որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ինքն է, որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց եւ մենք Քրիստոսով ցանցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՏՕՆ ԹԱԳԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ
ՍԱՆԴՈՒՍԿ ԿՈՅՍԻ**



Դուստրը՝ Սանատրուկ թագաւորին, որ աշակերտելով Թադէոս առաքեալին, իր հօրմէն գաղտնի ընդունած էր քրիստոնէութիւնը: Սանատրուկ, գայրանալով այս եղբուրեան վրայ, հայրական ամէն ողորհիչ միջոցներ ի գուր գործադրել վերջ, անդրդուելի գտնելով իր աղջկան հաւատքը, հրամայեց անոր մահը: Արքայազն օրիորդը, որ իր սեռին պատկանող շատերու ալ դարձին, այսինքն՝ հոգուց փրկութեան պատնառ եղած էր արդէն Հայաստանի մէջ, իբրեւ առաջին առաքելուհի Հայոց, եղաւ նաեւ առաջին վկայուհի, իր կուրծքէն ընդունելով նահատակող հարուածը: Ս. Թադէոս թաղեց անոր մարմինը թափուն տեղ մը: Քանի մը օր վերջ ինք եւս նահատակուեցաւ գլխատութեամբ՝ Սանատրուկի հրամանով: Երեք դարեր անյայտ մնաց անոնց գերեզմանները, մինչեւ Լուսաւորիչի եւ թերեւս նոյնիսկ Թարգմանչաց օրը: Թէեւ այս մասին յիշատակութիւն կայ Մովսէս Խորենացիի պատմութեան մէջ, բայց աւելի նոյն կերպով նկարագրուած է ան ժամանակակիցէ մը, եւ անկէ անցած Յայսմաւորէի մէջ:

Կիրակոս անուն միայնակեաց մը, որ կը բնակէր Թադէոսի եւ Սանդուխտի նահատակութեան վայրին մօտ՝ Սանատրուկ կոչուած լեռ մը, Արտագաւառի Շաւարշան դաշտէն ոչ հեռու, տեսիլքի մը մէջ տեսաւ ոսկի լուսաշող աթոռի վրայ բազմած մէկը, որ իր շուրջը ունէր հինգ մարդիկ, յետոյ բլուրին վրայ երեւցաւ արեւու պէս պայծառ ոսկեհուռ զգեստներ հագած թագաւորացն աղջիկ մը, որ գլխուն վրայ հրաշագեղ պսակ մը՝ եկաւ աթոռին առջեւ: Յետոյ սփանչելի կերպարանքով մարդ մը յայտնեց միայնակեացին, թէ լոյսը՝ Ս. Հոգւոյն շնորհքն է, աթոռին վրայինը՝ Թադէոս առաքեալն է, աղջիկը՝ Սանդուխտ կոյսն է, իսկ աթոռին շուրջինները՝ առաքեալին աշակերտներն են: Երկու օր վերջ, երկրորդ տեսիլքի մը մէջ առաքեալը, կոյսը եւ միւսները միայնակեացին կը մատնանշէին իրենց գերեզմանները: Այսպիսով գերեզմանները փորուելով բացուեցան եւ գտնուեցան նշխարները, որոնց շուրջը խոնուեցաւ ժողովուրդին երկիւղածութիւնը:

**ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏՃԱՍԽԱՄՆ
ԲԱԺԻՆ**

ԻՆՉ ՁԵՒՈՎ ԿՐՆԱՄ
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ
Նախ՝ ողորմած ու գթած պէտք է ըլլաս եւ երբ խեղճ աղքատները տեսնես, պիտի փորձես կարեկրութեանդ սահմանին մէջ անոնց օգնել, որպէսզի արժանի ըլլաս Քրիստոսի երանութեան: «Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս 5.7): Երկրորդ՝ պահեցողութիւն պիտի բնուի: